

Վ. Պ. Բալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԱ-ՄՈՒՍԻՈՏԱՅԻՆ ՎԻԿԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԵԼԱՆՅՈՒԹ

Վիկեր, որպես միամյա և թիթեռնածաղկավար խոտաբույս, մեծ չափով օգտագործվում է կերային և դաշտային ցանքաշրջանառություներում [2] և չափազանց արժեքավոր է, որպես կանաչ կեր ավոյ բույս, որովհետև հարուստ է մալուկի սպիտակուցներով և տիտիմանիտ չի առաջացնում։ Ունի նուրբ և բարձր որակով խոտ, իսկ հատիկն օգտագործվում է որպես խոտացրած սնամանակեր [3, 4]։ Վիկի և վարսակի խոտերը պարունակում է կարոտին (վիտամին A), որը կենդանիների սնման և զարգացման համար անհրաժեշտ է [5]։

Հայկական բնակությունում վիկի նոր սորտերի ստացման ուղղությամբ աշխատել է պրոֆ. Մ. Գ. Թումանյանը, որը Հայաստանի դաշտամուկախոտային թավոտ վիկերից առանձնացրել է մեկ սորտ, աշանաղյան երկհար թավոտ վիկեր։

Մ. Գ. Թումանյանը իր աշխատության մեջ նշում է, որ վիկի դաշտամուկախոտային և վայրի տեսակներից շատերը կերի բազա ստեղծելու գործում կարող են խոշոր դեր կատարել, ուստի անհրաժեշտ է այդ ուղղությամբ ուսումնասիրել գիտահետազոտական աշխատանքները [6]։

Պրոֆ. Շ. Մ. Աղաբաբյանը իր աշխատության մեջ գրում է, որ վիկի դաշտամուկախոտային ձևերի մեջ կան բավական արժեքավոր կերաբույսեր (*v. villosa*, *v. panonnica*, *v. narbonneensis*, *v. ervilla*), որոնք մշակության մեջ գեղես մեծ կիրառություն չեն ստացել [7]։

Պրոֆ. Ա. Ա. Մատթևոսյանը իր աշխատության մեջ նշում է, որ Հայաստանի դաշտամուկախոտային թավոտ վիկերից կարելի է ստանալ ցրտագիմացկուն ձևեր [4]։

Նշելով վերահիշյալ պահանջներից վիկի նոր բերքատու և վաղահաս սորտեր ստանալու համար հիմնական էլանյութ բնորոշելիք առկալիտն դաշտամուկախոտային թավոտ և գարնանաղյան վիկի պոպուլյացիաները, որի աշխատանքները տարվել են Հայկական ՍՍՌ Դոկումենտալիստիկայի Դաշտային և մարգագետնային կերահայելայելման ինստիտուտում 1950 թվականից սկսած։

Վիկի փորձարկումը 1950 թ. կատարել ենք Կալինինոյի և Մալոտոնու փորձադաշտերում, Կոտայքի շրջանի Ջառ գյուղում, ինչպես նաև Երևանում, ընդ որում վերահիշյալ շրջաններում գոյնաղյան կոլեկցիոն տնկարանում փորձարկվել են պաննոնական և Թումանյանի կողմից ստացված թավոտ վիկեր, իսկ Երևանում՝ Հայաստանի դաշտամուկախոտային վիկերի 33 պոպուլյացիաներ։

Հայաստանի տարրեր շրջաններում 1950 թ. կատարված միամյա կիրառյալ կուլտուրաների կոլեկցիոն նախնական փորձարկումներից պարզվեց, որ վիկերը հեռանկարային են Մարտունու (լեռնային շրջան), Կոտայքի շրջանի բարձրագույն մասերի և Կալինինոյի (լեռնային խոնավ շրջան) համար, ինչպես նաև Արարատյան հարթավայրի համար, սրտե խոզանադան Այստեղ փորձարկված վիկի 35 պոպուլացիաներից առանձնացրել ենք 26-ը, սրտե նկատմամբ սկզբնական աշխատանքները շարունակել ենք լեռնային խոնավ շրջանում:

Աշխատանքի հիմնական մեթոդը եղել է մասսայական բնորոշյունը: Նպատակ ունենալով վիկի նոր սորտեր ստանալ խոնավ շրջանների համար, 1951 թ. հիմնական աշխատանքները կատարվել են Կերահայթայթման ինստիտուտի Կալինինոյի փորձադաշտում, որտեղ 1950 թ. կատարված ցանքերում վիկը տվեց 71 ցենտներ չոր խոտ:

1951 թվականին տվյալ փորձադաշտում կոլեկցիոն տնկարանում փորձարկելիք Հայաստանի դաշտա-մոլախոտային վիկերից մեր կողմից առանձնացված 26 պոպուլացիաները, սրտե հետ միասին փորձարկել ենք նաև ուսյունացված յգոլյան սորտը և համեմատության համար ուրիշ երկու սորտեր՝ Մարտունական և Ալեքսանդրովյան: Փորձը գրվել է 3—4 կրկնողությամբ, մարզերի մեծությունը եղել է 10 քառ. մետր: Համեմատության համար վիկի վերահիշյալ պոպուլացիաները փորձարկել ենք նաև Մարտունու և Երևանի պայմաններում:

Հայաստանի դաշտա-մոլախոտային վիկերի զարգացման ֆազերի տևողությունը ուսումնասիրությունը էկոլոգիական տարրեր պայմաններում ցույց է տալիս հետևյալ պատկերը (աղյուսակ № 1):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ վիկի պոպուլացիաները երևանի պայմաններում ավելի վաղահաս են, քան Կալինինոյի և Մարտունու պայմաններում: Այսպես օրինակ՝ Ազիզբեկովի շրջանի Այդեհատ գյուղից վերցված նմուշը Կալինինոյի պայմաններում հասունացել է 103, Մարտունու պայմաններում՝ 100, իսկ Երևանում՝ 81 օրում: Նույն երևույթը նկատվում է Ստեփանավանի՝ Կուրթան, Լեջան, Շամշադինի շրջանի՝ Վ. Կարմիր Աղբյուր և ուրիշ գյուղերից վերցված նմուշների նկատմամբ: Թերված տվյալներից նաև երևում էր, որ ծլումից մինչև ծաղկման տևողությունը Կալինինոյի պայմաններում ավելի երկար է, քան Մարտունու պայմաններում: Վիկի ծլումից մինչև ծաղկումը տևողությունը ամենից կարճ է Երևանում: Կարնանայանի պայմաններում այն կազմում է 46—50 օր: Վեգետացիայի տևողություն և սեման ֆազերի աչտպիսի փոփոխությունը բացատրվում է վիկի բխողիական առանձնահատկությամբ: Հայաստանի դաշտա-մոլախոտային վիկերը զարնանը ցանկու դեպքում, ինչպես նշում է պրոֆ. Մ. Գ. Խումանյանը, սկզբնական շրջանում դանդաղ են աճում, (մասամբ օրացված մեկ ամսով): Այդ երևույթը պարզ նկատվեց նաև մեր փորձերում, 1950 թ. աշնանը Կալինինոյի փորձադաշտում ցանված թավոտ վիկը 22 օր ավելի շուտ ծաղկեց 1951 թ. գարնանը նույն փորձադաշտում ցանված վիկից: Այստեղից էլ պարզ հետևություն, ինչքան վիկի (պոպուլացիայի) ծլումից ծաղկման տևողությունը երկար է, այնքան տվյալ պոպուլացիան ումեղ արտահայտված աշնանացան լինելու հատկություններ ունի և ընդհանրապես: Այսպես օրինակ՝ Նոր Բայազետի Ծաղկեհատ գյու-

դից վերցված վիկի դարձանադան նմուշի ծյուծից մինչև ծաղկումը տեղ-
դուծյունը կալինինոյում 36 օր է, Մարտունում՝ 40, Երևանում՝ 22 օր:
Մինչդեռ Ստեփանավանի կգարակ գյուղից վերցված աշնանուցան վիկի
պտպուլացիայի ծյուծից մինչև ծաղկումը տևողությունը կալինինոյում 66
օր էր, Մարտունում՝ 61, իսկ Երևանում՝ 49 օր:

Աղյուսակ I

Հայաստանի դաշտա-մոխրատաշին վիկերի աճման ֆազերի տեղությունը օրերով
(կալինինոյում, Մարտունում, Երևանում)

№	Կարգի նշան	Պտպուլացիա վերցրած վայրի և սարահանունը	Ցանրը կու- տարվել է Կա- լինինոյում 12:3		Ցանրը կու- տարվել է Մա- րտունում 17:1		Ցանրը կատարվել է Երևա- նում		Զանգեզուրի պտպուլացիայի համեմատական արժեքը
			Ցանրի կատարվել ուղի	Ցանրի կատարվել ուղի	Ցանրի կատարվել ուղի	Ցանրի կատարվել ուղի	Ցանրի կատարվել ուղի		
							12:4	17:7	
1	Գորիս-Թաղադար . . .	66	108	60	112	48	82	—	—
2	Ախուրյան-կամու . . .	64	103	58	108	—	—	—	—
3	Ղափան-Քաջարան . . .	65	103	58	107	—	—	—	—
4	Աղիպրեկով-Այդեհաս . . .	65	103	54	100	45	81	—	—
5	Նոր Բայազետ-Մաղկեճատ . . .	38	89	40	85	32	67	84	—
6	Սիսիան-Բարխուդկա . . .	65	105	—	—	46	85	—	—
7	Ստեփանավան-Աղարակ . . .	65	105	—	—	—	—	—	չեն հա- ստանացել
8	Ստեփանավան-Էջման . . .	66	105	61	104	49	85	—	»
9	Շամշադին-Վ. Կ. Աղբյուր . . .	64	103	52	105	46	82	—	»
10	Վիկ թափու թումանյանի . . .	64	105	59	104	47	83	89	»
11	Վիկ Հունգարական . . .	58	100	59	100	49	80	—	»
12	Վիկ Մարանական . . .	68	113	65	109	—	—	—	»
13	Վիկ Կոմյան . . .	69	115	64	107	—	—	—	»
14	Դաշտային սյու կամ պել- յուշկա . . .	58	103	58	103	—	—	—	»

Վիկի պտպուլացիաների ծյուծից մինչև ծաղկման ֆազան ամենից
երկար է երևանի ամառուցան պայմաններում (84—89 օր): Այս հանդաման-
քը նույնպես բացատրվում է վիկի բնորոշական առանձնահատկությամբ:
Վիկը երկար օրվա բույս է, ամառացանի դեպքում բույսերի հետագա պու-
ղացումը ընկնում է կարճ օրվա պայմաններում, երբ նրանց զարգաց-
ման համար պայմանները այնքան էլ նպաստավոր չեն, ուստի նրանց
աճումը և զարգացումը չեն զուգակցում, սրի պատճառով նրանք ավելի
ուշ են ծաղկում և չեն հասունանում: Վերջինս կարևոր հանգամանք է խո-
ղանացանի դեպքում վիկից բարձր բերք ստանալու համար, որովհետև
ինչքան երկար է ծյուծից ծաղկման տևողությունը, այնքան ավելի շատ
մասսա է կուտակվում և բերքը բարձր է լինում: Մյուսից ծաղկման ֆա-
զը Մարտունու պայմաններում ավելի կարճ է (աղյուսակ № 1), քան Կա-

լինինոյի պայմաններում, սակայն վիկի վեգետացիան 1951 թ. Մարտունու պայմաններում մի քանի օրով երկարացել է: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ Մարտունու պայմաններում մեկ անգամ քրեյր վեգետացիան երկարացել է:

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, փորձարկվող վիկի պոպուլացիաներից ամենից վաղահաս է Նոր Քաղաքի մագիկհատ դյուդից վերցված նմուշը, որի վեգետացիայի անսկզբունքը եղել է Կալինինոյում 89 օր, Մարտունուում՝ 85 օր, Երևանում՝ 67 օր:

Այսպիսի վաղահասութիւնը չափազանց կարևոր առանձնահատկութիւնն համարելով, տվյալ նմուշից մասսայական ընտրութիւն միջոցով առանձնացրել ենք սերմեր, որոնց հետ նախատեսում ենք սելեկցիոն աշխատանք շարունակել:

Աղյուսակի տվյալները պարզ ցույց են տալիս նաև, որ մեր կողմից փորձարկված վիկիերը տվյալ շրջանում տվելի վաղահաս են, քան հայտնացված լգովյան սորտը:

Աղյուսակ 2

Վիկերի խոտի բերքը կուկցիոն անկարանում

№	Ըստ կայքի	Պոպուլացիայի վերջին օրը և սորտի անունը	Միջին օրը և սորտի անունը	Խոտի բերքը		Չոր խոտի երկ	Նախապատրաստված կուկի քանակ	Չոր խոտի բերքի համեմատական քանակը հետաքննության
				Հազար	Տոն			
1	Գորիս Թաղապարտ . .	80	200	40	20	26,93	109,7	
2	Հափան Բաջարան . .	100	293	57,7	19,7	27,68	158,0	
3	Աղիգրեկով Այգեհատ .	103	291	61,1	21,0	30,15	267,0	
4	Սիսիան Բարխուդկա .	100	285	55,0	15,8	28,9	130,0	
5	Նոր Քաղաքի մագիկհատ	100	258	43,4	17,6	37,75	124,0	
6	Ստեփանավան—Գյուլարապետ	100	327	68,0	20,8	26,38	188,8	
7	Ստեփանավան—Լեջան .	119	350	71,0	20,3	32,85	193,7	
8	Շամշադինի Վ. Կ. Աղբուր	115	321	67,4	21,0	20,73	184,1	
9	Էջմիածին—Փարաբուր .	102	251	50,2	20,0	28,23	143,2	
10	Վիկի Խաղոտ Խոտանյանի	120	314	61,3	19,2	26,52	169,4	
11	Վիկի հունգարական (պաննահան)	110	400	74,4	18,6	33,06	201,0	
12	Կարմիրի շրջանից . .	105	318	59,8	18,8		166,7	
13	Սարանական վիկ . . .	100	178	34,9	19,6	29,9	98,5	
14	Լգովյան վիկ	100	191	36,6	19,2	33,2	100,0	
15	Դաշտային ոլոռ պեյլուշկա	125	360	61,2	17,0	103,05	169,4	
16	Աղիգրեկովի շրջանից .	110	300	59,7	19,9	26,48	166,7	
17	Մաշ	28						

Հ ի յ ա ղ կ ե լ

Խ ա ո ղ Կ Ե Լ

Բերված № 2 աղյուսակի տվյալներից պարզվում է, որ Կալինինոյի պայմաններում Հայաստանի վիկի պոպուլացիաներից ամենաբերքատունը Ստեփանավանի շրջանի Լեջան դյուդի պոպուլացիան է, որը հեկտարից

—վի է 350 ցինտներ կանաչ և 71 ցինտներ չոր խոտ: Սույն պայմաններում բարձր բերք տվեցին նաև № 2, 3, 6, 8, 10 և 12 պոպուլացիաները: Թավոտ վիկի հետ համեմատած (*vicia villosa*) կալինինոյի պայմաններում պաննոնական վիկը (*v. panonica graz*) տվելի բերքատու է: Այսպես օրինակ՝ էթե Թավոտ վիկի դարձանք ցանկիս տվել է 314 ց/ն կանաչ խոտի և 61,28 ց/ն չոր խոտի բերք, ապա պաննոնական վիկից ստացվել է 400 ց/ն կանաչ և 74,4 ց/ն չոր խոտի բերք: Պետք է սսել, որ պաննոնական վիկը 1950 թ. ցանքերում նույնպես բարձր բերք տվեց — 71 ց/ն չոր խոտ:

Աղյուսակի տվյալներից պարզ երևում է, որ մաշը (*vigna sinensis*) լեռնային խոնավ շրջանում հեռանկար չունի, մինչդեռ դաշտային ոլոռը (*pisum arvense*) բավական հեռանկարային է: Մեր ցանքերում դաշտային ոլոռը տվեց 360 ց/ն կանաչ և 61,2 ց/ն չոր խոտ: Միևնույն ժամանակ դաշտային ոլոռի չոր խոտի ելի տոկոսը ցածր է՝ 17 տոկոս: մաշից ստացվեց խոտի աննշան բերք: փորձարկուիներից պարզվեց, որ դաշտային ոլոռը դարձանացանում կանաչ կեր ստանալու համար տվյալ շրջանում ավելի հեռանկարային է քան Թավոտ վիկը: Օրինակ՝ դաշտային ոլոռը տվեց 360 ց/ն կանաչ հյութավոր մասսա, մինչդեռ Թավոտ վիկից ստացվեց միայն 314 ց/ն կանաչ մասսա:

Փորձարկված վիկի պոպուլացիաների չոր խոտի բերքատվությունը համեմատելով շրջանում ուսյունացված վիկի հետ, ստացվում է, որ վիկի միայն երկու պոպուլացիաներն են ցածր բերք տվել, իսկ մյուս պոպուլացիաները գերազանցել են ստանդարտին 9-ից մինչև 93 տոկոս, այսինքն կան պոպուլացիաներ, որոնք համարյա երկու անգամ ավելի բերք են տվել, քան ուսյունացված սորտը:

Տեղական պոպուլացիաներն տվելի բերքատու են և վաղահաս, քան ուսյունացված սորտը: Այստեղից ամենապարզ հետևությունն այն է, որ նոր սորտերի ստացման ժամանակ միշտ նպատակահարմար է օելեկցիոն ելանյութ ընտրել տեղական պոպուլացիաները, որովհետև նրանք երկար տարիներ տեղում մշակվելով, այդ միջավայրում արդեն դրսևորել են իրենց մասնագիտական հատկանիշները, որոնցից լավագույնի ընտրումն արդեն հեշտանում է:

Կալինինոյի շրջանում մեր կողմից 1950 թ. առանձնացված և 1951 թ. փորձարկված վիկի պոպուլացիաներից մասսայական ընտրություն միջոցով առանձնացրել ենք աչքի բնկնող 11 նմուշներ, որոնց նկատմամբ աշխատանքը շարունակվում է բարձրորակ սորտեր ստանալու նպատակով: Ստացված տվյալները թույլ են տալիս մեզ անել հետևյալ նախնական եզրակացությունները:

1. Հայաստանի դաշտա-մոլախոտային վիկերը մեր փորձարկված վայրերում ամենից վաղահաս են երևանի պայմաններում, որտեղ նրանք հասունանում են 67—85 օրում և ամենից ուշահաս են Կալինինոյի պայմաններում, որտեղ հասունացումը տևում է 103—115 օր:

Ինչքան վիկի ծլումից ծաղկման տևողությունը դաժնանը ցանկիս երկար է, այնքան տվյալ նմուշը ի հայտ է բերում աշնանացան լինելու հատկություններ և հակասակը, որքան այդ ֆազի տևողությունը դարձնանը ցանկիս կարճ է, այնքան տվյալ նմուշը ի հայտ է բերում դարձանացան լինելու հատկություններ: Մեր փորձերում որպես աշնանացան

դրսեորվեց Ստեփանավանի շրջանի Ազարակ գյուղից վերցված նմուշը, իսկ որպես դարնանացան՝ Նոր Բայազետի շրջանի Մադկենհատ գյուղից վերցված նմուշը:

3. Հայաստանի դաշտա-մոլորոտային վիկերից ամենալուրջանաւոր Նոր Բայազետի շրջանի Մադկենհատ գյուղից վերցված նմուշն է, որը Նրեանում 67, Մարտունում 85, Կալինինոյում 89 օրվա վեգետացիոն տևողություն է ունեցել: Ամենից բերքատուն Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի պուլպուլացիան է, որը Կալինինոյում գարնանը ցանելիս տվել է 350 ց/հ կանաչ և 71 ց/հ չոր խոտ: Բարձր բերքատվությամբ աչքի են ընկնում նաև հետևյալ նմուշները՝ №№ 2, 3, 6, 8, 12 (աղյուսակ № 2): Սրանցից մասսայական ընտրության միջոցով առանձնացված են բույսեր, որոնց հետ սելեկցիոն աշխատանքը շարունակվում է բերքատու սորտեր ստանալու նպատակով:

4. Կալինինոյի պայմաններում դաշտային ոլոռ (pisum arvense) դարնանը ցանելիս որպես կանաչ կեր ավելի հեռանկարային է, քան թավոտ վիկը (vicia villosa):

5. Կալինինոյի պայմաններում փորձարկված մի շարք պոպուլացիաներից՝ ինչպես օրինակ՝ Ստեփանավանի շրջանի Լեջան, Գյուլագարակ, Շամշադինի շրջանից Վ. Կ. Աղբյուրը և այլ գյուղերից վերցված նմուշները դարնանը ցանելիս ավելի բերքատու են, քան Մ. Դ. Թումանյանի կողմից առանձնացված աշնանացան թավոտ վիկր և ուսյունացված լզովյան սորտը: Մեր փորձերում նրանք տվեցին 67,4—71 ց/հ չոր խոտ, մինչդեռ Մ. Դ. Թումանյանի կողմից առանձնացված վիկից ստացվեց 61,2 ց/հ իսկ լզովյան սորտից 36,6 ց/հ չոր խոտ:

6. Կալինինոյի պայմաններում դարնանը փորձարկվող բոլոր վիկերից ամենաբերքատուն պանոնական վիկն է (vicia panonica gras), որը տվել է 71,4 ց/հ չոր խոտ: Այս հանգամանքը թույլատրում է մեզ առաջարկել պանոնական վիկր մտցնել խոնավ լեռնային գոտում մշակվող միամյա կերային կուլտուրաների ասորտիմենտի մեջ:

Հայկական ՍՍՏ Գյուղատնտեսության մինիստրության

Ստացվել է 14 V 1932

Դաշտային և մարդագետնային կերահայթայթման

ինստիտուտ

Այ 1932

— Գն ժող

Հետևում է

Կոմիտայի

այլում բաժնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. Ս. Մ. Агабабян—Вики, из книги Кормовые растения сенокосов и пастбищ СССР. II том, 1951.
2. Գ. Զ. Գալստյան— Երկհար թավոտ վիկի օգտագործումը Արարատյան դաշտավայրում: Հայկական ՍՍՏ Գիտ. ակադեմիայի Երկրագործության ինստիտուտի № 2 աշխատություններ, 1949.
3. Ա. Ա. Մատթեոսյան— Վիկ, 1947:
4. Ա. Ա. Մատթեոսյան— Դաշտային կերահայթայթում, 1950:
5. Մ. Դ. Թումանյան— Դաշտա-մոլորոտային թավոտ վիկերի բաղաձայնը ձևերը, 1932:
6. Մ. Բ. Яковкин— Растениеводство, 1947.

— ամրագրված է Կոմիտայի

Հայկական Գիտ. ակադեմիայի

В. П. Бальян

Сорно-полевые вики Армении, как исходный материал для селекции

Р е з ю м е

Работы по получению новых сортов высокоурожайных и скороспелых вик были сосредоточены во влажной лугостепной зоне, на Калининском опытном поле Института полевого и лугового кормодобывания.

В основном испытывались 26 популяций местных сорно-полевых, яровых и мохнатых вик. Испытанию подвергались также районированный льговский сорт и сорта саранский и александровский.

Для сравнения этих популяций испытывание производилось также в Ереване (низменная зона) и в Мартуни (горностепная зона).

Применялся метод межсортовой гибридизации и массового отбора.

В процессе изучения выяснилось следующее:

1. Сорно-полевые вики Армении наиболее скороспелы в условиях Еревана, где они созревают на 81—85-ый день (низменная зона) и наиболее позднеспелы в условиях Калининно (влажная лугостепная зона), где созревают на 103—115-ый день.

2. Чем продолжительнее период от появления всходов до их цветения, тем больше данный образец проявляет признаки озимости и, наоборот, чем этот период при весеннем посеве короче, тем более данный образец подходит к яровой популяции. В наших посевах такой озимой популяцией явился образец, полученный из села Агарак, Степанаванского района, а яровой оказался образец из Цахгегат, Нор Баязетского района.

3. В условиях лугостепной зоны (Калининно) полевой горох (*Pisum arvense*) более перспективен для возделывания на зеленый корм при весеннем посеве, чем мохнатая вика (*vicia villosa*).

4. Из сорно-полевых вик Армении наиболее скороспелыми оказался образец из селения Цахгегат, Нор Баязетского района, а наиболее урожайным образец из с. Леджан, Степанаванского района, и № 2, 3, 6, 8, 12. Из последних методов массового отбора выделены лучшие образцы для продолжения селекционных работ.

5. Некоторые сорно-полевые популяции вик Армении, как, например, образцы из селений Леджан, Гюлагарак, Степанаванского района, и В. К. Агбюр, Шамшадинского района, при весеннем посеве в условиях Калининно более урожайны, чем мохнатая вика, выделенная проф. М. Г. Туманяном, и районированный льгонский сорт посевной вики. Они дали 67,4—71,0 ц/га, в то время как вика Туманяна дала 61,2 ц/га, а льговский сорт—86,6 ц/га.

6. Наиболее урожайным из всех ви́к, испытывавшихся в условиях Калинино при весеннем посеве, оказались паннонская ви́ка, давшая 74,4 центнера сена с га. Это обстоятельство позволяет рекомендовать паннонскую ви́ку включить в ассортимент возделывания во плажной лугостепной зоне однолетних трав.